

Ներածություն

Սպառողների լայն շրջանին ուղղված վիճակագրական սույն ժողովածուում արտացոլվել է հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսության գործունեությունը բնութագրող ամփոփ տվյալների դինամիկան և 2013թ. վիճակագրական ցուցանիշների քանակական վերլուծությունը: Իրավիճակի արտացոլման ցուցանիշների ընտրությունը կատարվել է՝ ելնելով միջազգային համադրելիության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ներքին սպառողների պահանջներից:

Ժողովածուի կազմման համար հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից հավաքագրված վիճակագրական տվյալները, հանրապետության մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների, մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանցում գործող վարչական ռեգիստրների, ինչպես նաև կազմակերպությունների ամփոփ տվյալները: Վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների շրջանակը որոշվել է համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ՝ հիմք ընդունելով իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի և գերատեսչական մարմինների վարչական ռեգիստրների տվյալները: Բնակարանային ֆոնդի հաշվառման մասով վարչական ռեգիստրների կողմից տրամադրված ժամանակային շարքերում փոփոխությունները ներառում են ոչ միայն նոր շահագործման հանձնված բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների ընդհանուր մակերեսները (այսուհետ՝ բնակմակերեսներ), այլև այլ կատեգորիաներից բնակմակերեսների վերափոխվածները, նախորդ ժամանակաշրջաններից շահագործված կամ չշահագործված, սակայն հաշվետու ժամանակաշրջանում օրինականացված՝ սեփականության իրավունքը գրանցած բնակմակերեսները, այդ թվում կցակառույցների, լրակառույցների և այլ տեսքերով, ինչպես նաև նախկինում վարչական հաշվառումից դուրս մնացածները:

Ժողովածուում ներառված են հետևյալ բաժինները. բնակարանային ֆոնդ, բնակարանային ապահովվածություն, անշարժ գույքի շուկա, բնակչության, կոմունալ-կենցաղային տնտեսության և արտադրության ջրամատակարարում, կոյուղացում, գազաֆիկացում, քաղաքային համայնքների սանիտարական մաքրում ու բարեկարգվածություն: Բաժիններն ավարտվում են հիմնական ցուցանիշների վիճակագրական դինամիկ շարքերով:

ՀՀ ԱՎԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ խորհրդատվական ծառայությունների և առանձին բաժինների խմբագրական աշխատանքների համար:

Հուսով ենք, ժողովածուն կարող է տեղեկատվական հիմք հանդիսանալ սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակողների և այն իրականացնողների, գիտակրթական գործունեությամբ զբաղվողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

Ժողովածուն պատրաստել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսության վիճակագրության խումբը:

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	–
վիճակագրական տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0